յամենայն մենաստանս Երուսաղէմի, նաեւ շուրջ զԵրուսաղէմաւ ուր էին վանօրայք Հայոց։

Անաստաս վարդապետս Ցերասլօլսեցի 'ի խնդրոյ բարեպաշտ իշխանին Համազասպայ Կամսարականի Պալհաւունեաց գրեալ զայսոսիկ ետու նմա, որ կամէր գնալ 'ի Ս. Երուսաղէմ, որ և գնաց իսկ և արժանացաւ աստուածակոխ Ս. Տեղեացն, յորս շրջեցաւ Տէր Յիսուս 'ի մարդանալն իւրում, եւ 'ի Հայրապետէն Ս. Երուսաղէմի թափեալ աղաւաեաց զամենայն վանօրայսն Հայոց անկելոց ընդ բռնութեամբ Ցունաց, որք կամէին փոխել զկարգ և զսահմանս նոցա, եւ յեղաշրջել 'ի հաւատս՝ զոր քարոզէին յայնմ ժամանակի Ցորնաղ Քաղկեդոնիկ հայրապետն Երուսաղէմի։

Բայց սակայն յետ ժամանակաց ինչ և աւուրց սկսան նեղութիւնս տալ եւ տանջանս հարցն Հայոց Պատրիարգունք Ցունաց սակս ոչ հաւանելոյ նոցա Ժողովոյն Քաղկեդոնի։ Եւ միաբանեալ ամենայն Հարք եւ առաջնորդք անձինք 500 գրեցին առ երանելի Կաթուղիկոսն Ցովհան, և այլ աթոռակալսն, թէ զի՞նչ պարտ է առնել. հաւանի՞լ նոցա և ունել իւրաքանչիւր զտեղի բնակութեան իւրեանց, եթէ թողուլ եւ ելանել անտի. վասն զի հրաման թագաւորին Ցունաց օր ըստ օրէ խստանայր 'ի վերայ քաղաքին Երուսաղէմի եւ 'ի վերայ հայրապետացն մերոց. զի մի ոք բնակեսցի անդ 'ի կրօնաւորացն Հայոց, և Ցակոբիկ Ասորի, և կամ յԵգիպտացւոցն. այլ միայն բնակեսցին այնք, որք ունին զդաւանութիւն թագաւորին եւ զսահմանադրութիւն Ցորնաղի։

Առ այս գրեաց Կաթուղիկոսն Հայոց, թէ վասն հաւատոյ մի հնազանդիք դոցա, այլ թողէք և արտաքս գնացէք 'ի քաղաքէդ այսի։ Վասն որոյ բազումք թողին զվանօրայս և զինչս իւրեանց և 'ի բաց գնացին. ոմանք չոգան յԵգիպտոս, ոմանք գնացեալ բնակեցան 'ի Կեսարիա. և բազումք եւս 'ի տեղւոջէ իւրեանց ո՛չ շարժեցան և ո՛չ գնացին յայլ ուրեք, այլ կացին և մնացին 'ի տեղիս իւրեանց՝ համբերելով բազմաց նեղութեանց, աւարառութեանց, դանից և տանջանաց. մինչեւ տիրեցին Տաճիկք աշխարհին Պաղեստինոյ և Երուսաղէմի. և այնուհետեւ